ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. 50 կ. Թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեշրջանի (93 օգոստ.—94 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1894 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հեռեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 45

1894 ՓԵՏՐՎԱՐ 24

ՓԵՏՐՎԱՐ 12 (Հ. Տ.)

ՇԱՐԱԿ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ. ԱՆԵՐԹ. ՕՐԵՐ

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Գարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի վիճակը.— Հայ եւ պուլկար դպրոցների խնդիրը Թիւրքիոյ մէջ. — Հայեր ի Թիւրքիա. — Նամակ Ռումանիոյեն (Տոպրուճա). — Նամակ Պուլկարիոյեն (Սլիվէն). — Գոհարեանական մադրաքը ի Ռուսճուգ. — Կ. պօլսի պուլկար եկզարքարանի խնդիրը.— Պուլկարների մի նոր յառաջխաղացութիւնը. — Թիւրքիոյեն լուրեր. — Անգիլիոյեան ոճիրներ. — Արտասահմանի լուրեր. — Յանուցումներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Կ. պօլսեն փետրվ. 15ին «Սհմաճօր»ի գրուած բդրակցութենեն կը քաղենք հետեւեալը։

Էրզրումի մէջ ամիսներէ ի վեր տիրող սոսկալի սովին բուն պատճառը հասկցուած է այժմ։ Պարզապէս հայ գիւղացիների գալմելուն հետեւանքն եղած է այդ։ Կը հաւատան թէ վերջին 10 ամիսներուն մէջ միայն՝ 7000 հայ գիւղացիներ իրենց երկիր թողլով գնացեր ապաստաններ են Պարսկաստան կամ Ռուսաստան։ Խնուսի հացաշատ նահանգը որ Հայաստանի չեմարանը կը համարուէր, անցած տարի չէ սերմանուած։ Այս նահանգ և ուրիշ շատեր բոլորովին անապատ դարձեր են այժմ և Քիւրտերն ա՛լ գողնալու բան չեն գտներ։ Այս բոլոր չարիքներուն իրական պատճառը Քիւրտերուն յափշտակասիրութիւնն է, մանաւանդ անոնց որոնց «Համիտիյէ» անունը կը տրուի մի ժամանակէ ի վեր։ «Համիտիյէ» կը կոչուին Քիւրտերէ միայն կազմուած օժանդակ հեծելազօրքի գունդերը որոնք խազախ կոչուած ռուս հեծելազօրքի բանակին նմանութեամբ կազմուած են և իրենց ընդհանուր հրամանատար նշանակուած է Մարալախտ Շաքիր փաշան։

Պաշգալաի մէջ որ Էրզրումի նահանգին կը վերաբերի (1), Համիտիյէները սպաններ են խատիւն որ չէր ուզած իր քսակ պարպել աւոնց ձեռքին մէջ։ Էրզրումի Ալաչկերտ գաւառին մէջ բոլորովին կողոպտեր են Հազզօ անուն մի անձի ցորենի չտեմարանները որ այդ գաւառի արմրտիքի տասանորդի վարձակալութիւնները վրայառած և 20,000 ֆրանգ վճարած էր Տէրութեան գանձին։

Եթէ անցնինք Մծտակայ մի ուրիշ նահանգ, Սեբաստիա, այդտեղ ալ Հայերը կը գտնենք բոլորովին ողբալի մի վիճակի մէջ։ Սեբաստիոյ ընդհանուր կառավարիչը (վալի), Խալիլ պէյ, մի ազդեցիկ և պարկեշտ մարդ կը համարուի և այդ նահանգի մէջ գործուած բոլոր ղեղծումներուն պատասխանատուութիւնը չէ կարելի իր վրայ ձգել։ Այսու ամենայնիւ, ոչ պակաս ճշմարիտ է սա իրողութիւնն թէ Սեբաստիա քաղաքի և նոյն նահանգի բոլոր քաղաքներուն բանտերը լեցուած են հայ բանտարկեալներով որոնց ամենամեծ մասը զրպարտական մատնութիւններով կամ ամենաչնչին պատրուակներով ձերբակալուած են։ Իրենց մէջ կան այնպիսիներ որոնք 15 ամիսներէ ի վեր սոսկալի բանտերի մէջ ձգուած, ի զուր կը խնդրեն և կը սպասեն որ իրենց գատաստան տեսնուելով անմեղութիւննին յայտնուի։ Ոմանք դրամի չնորհով յաջողած են դնել իրենց ազատութիւն. բայց շատեր որոնք աղքատ էին, անօթութենէ, ցրտէ և հիւանդութիւններէ մեռած են բանտին մէջ։

Նոյն իսկ Սեբաստիոյ քաղաքին մէջ Հայերուն բացարձակապէս արգիլուած է յարաբերութիւն ունենալ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն և Ֆրանսայի հիւպատոսներուն հետ։ Մի դժբաղդ հայ բժիշկ, որի վիճակը մասնաւորապէս հետաքրքրաշարժ է, սոսկալի կերպով պատժուած է այդ քմահաճ արգելքի դէմ մեղանչած լինելուն համար։ Այդ բժշկի անունն է Գարեգին Հէքիմեան որ իր բժշկական ուսումը առած է Ամերիկայի մէջ։ Որովհետեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն հիւպատոսին տունը կը յաճախէր, կառավարիչ փաշան անկէ վրէժ լուծելու համար ձերբակալել տուած է այնպիսի ծաղրելի չնչին պատրուակներով որ արդարեւ լսողին զայրոյթ կը պատճառեն։ Մի կեղծ նամակ չիներ են որի տակ ստորագրութիւն չկայ և այդ անծանօթ նամակագիրը մի անծանօթ անձի կը գրէ թէ ինք Տօքթօր Հէքիմեանէն 50 ոսկի ստացած է «ազգային դատ»ի յաղթանակին նպաստելու համար։ Ահա մի այդպիսի գրութեան վրայ հիմնուելով բանտարկուած է Հէքիմեան։ Կը կարծեմ գիտնալ թէ Միացեալ-Նահանգներուն հիւպատոսը դիմած է Կ. պոլսի իր դեսպանի և խնդրած է որ այս հրէշային ամբարշտութիւն իմացունէ ուր որ անկ է և Սուլթանի ծանօթ գթութեանը դիմումէ անէ։

ՀԱՑ ԵՒ ՊՈՒԼԿԱՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ

Ամեն. Պատրիարքը անցած չաբթու մէջ դարձեալ տեսակցութիւններ ունեցաւ Մեծ Եպարքոս Ձէվատ փաշային հետ, Փոքր-Ասիոյ Հայոց դպրոցներուն նկատմամբ։

Միեւնոյն օրեր Պուլկարների Ամեն. Էկզարքն ալ տեսակցեցաւ Մեծ Եպարքոսին հետ, Մակեդոնիոյ պուլկար դպրոցների խնդրին նկատմամբ։

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողների, մեր վայելած գարաւոր առանձնաշնորհումներուն հակառակ, Բ. Դուռը կուզէ նորանոր սեղմումներով են թարկել Փոքր-Ասիոյ Հայ վարժարանների յառաջդիմական ընթացքը, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ պուլկար վարժարանները։ Զբաւականանալով այս վերջին ժամանակներ Հայերուն վրայ հետզհետէ ծանրացուցած վարժարանական նոր օրէնքներով, որոնք մէկ մէկ հարուած էին մեր պատրիարքարանի վայելած գարաւոր առանձնաշնորհումներուն և որոնց համեմատ պատրիարքարանն ա՛լ չպիտի կրնայ ո՛չ մի նոր վարժարան բանալ Թիւրքիոյ ոեւէ մէկ գիւղին մէջ անգամ առանց նախապէս Բ. Դուռէն յատուկ թոյլտուութիւն առանալու, ո՛չ մէկ դասագիրք պիտի կրնայ դործածուիլ հայ վարժարաններուն մէջ առանց նախապէս թիւրք կառավարութենէն քննուելով թոյլատրուելու և այլն. չբաւականանալով այդ ամեն ճնշումներով, Բ. Դուռը կը պահանջէ այժմ որ Փոքր Ասիոյ հայ վարժարանները, ինչպէս և Մակեդոնիոյ պուլկար վարժարանները, թիւրք պաշտօնեաներուն տեսչութեան ենթարկուին։ Այս վերջին ժամանակները քրիստոնեայներուն վարժարանները թիւրքիոյ կրթական հսկողութեանն ենթարկուած էին արդէն և նոյն նախարարութեան կրթական տեսուչներն երբեմն այցելութեան գալով կը քննէին վարժարանների վիճակը և տեղեկութիւններ առնելով կերթային։ Այժմ հսկողութիւնը բաւական չհամարիր Թիւրքը, այլ կը պահանջէ որ բուն իսկ վարժարաններուն մէջ կեցող մնայուն տեսուչներն ալ այսուհետեւ Բ. Դուռէն ընտրուած թիւրք պաշտօնեաներ լինին։

Ինչպէս կը տեսնէ ընթերցողը, խնդիրը շատ ծանր է այժմ. ազդին համար մահի և կեանքի խնդիր է։ Ինչ որ Ծոյներուն չպիտի կրնար առաջարկել Բ. Դուռը, Աչըգեանի պէս մի ամենաթոյլ Պատրիարքի միջոցով կուզէ գործադրել Հայերուն մէջ։ Բայց վերջապէս համբերութիւնն ալ մի չափ և սահման ունի ուրկէ անդին չեն կրնար անցնիլ ամենէն խոհեմ և հանդարտ համարուած մարդկերն ու ժողովուրդներն ալ։ Կրթական մի այդպիսի նոր ճնշման գործադրութիւնը Հայ վարժարաններուն մէջ՝ շատ հաւանական է որ մի այնպիսի մեծ յուզման և խռովութեան պատճառ դառնայ որ թէ՛ Բ. Դուռը և թէ՛ իր հզու կամակատար Աչըգեան պատրիարքը հասկընան վերջապէս թէ խելացութիւն չէ Հայ ժողովրդի ամենէն սրբազան զգացմունքներին հետ խաղալ անպատկառ կերպով։

Յայտնի է որ մեր դպրոցները մեր եկեղեցիների նախագահութիւններն են. հոն կը կրթուին Հայ քրիստոնեայներն, անկէ կելնեն Հայ եկեղեցու դպիրները, հոն կը պատրաստուի Հայ եկեղեցականութիւնը. արդ, միթէ մահմետական Թիւրքը պիտի պատրաստէ այսուհետեւ մեր եկեղեցու պաշտօնեաները, միթէ՞ նա պիտի տայ Հայ քրիստոնէին և իր եկեղեցականի զարգացման չափն ու ձեւը. միթէ՞ այսուհետեւ ազգտաներէն պիտի ընդունին Հայեր իրենց կրօնական և ազգային դաստիարակութիւնը. ուրեմն ա՛լ ի՞նչ բանի պիտի ծառայէ պատրիարքարանի իշխանութիւնը երբ մեր եկեղեցիների նախագահութիւնները եղող վարժարաններն ալ ազգտանների տեսչութեանը պիտի յանձնուին բոլորովին։ Մեր ազգային պատմութեան մէջ մինչեւ այժմ նմանը չտեսնուած և չլսուած մի բռնաւորական ճնշում է այս որին կուզեն ենթարկել Հայի միտքն ու Հայի խիղճը։

---

(1) Պաշգալէն Հէքեարիի նահանգին կը վերաբերի. ուստի այստեղ կամ Նահանգի կամ գաւառի անունին մէջ մի սխալ մտած է. Թերեւս Գայազիտի գաւառը լինի որ Էրզրումի կը վերաբերի։

ԽՄԲ. ԱՐՄ.

Բ. Դուռը արդէն իսկ ամենաչնչին պատճառներով փակել տուեր է մի քանի պուլկար վարժարաններ Մակեդոնիոյ մէջ. ինչո՞ր չպիտի անէ արդեօք հոն ալ, երբ իր տեսուչների ոտքը պուլկար վարժարաններէն ներս մտնելով հաստատուէին հոն։ Բայց միւս կողմէ ալ Պուլկարիոյ մէջ հրատարակուող լրագիրներն արդէն իսկ սկսած են սպառնական դիրք բռնել և հասկցունել Բ. Դրան թէ այսպիսի խնդրի մէջ պուլկար կառավարութիւնը կատակներ անել չսիրեր։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Գեր. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանց իր անձնական տկարութեան պատճառով հրաժարեր է կեդրոնական վարժարանի կրօնագիտութեան և եկեղեցական պատմութեան դասախօսութենէն։ Վարժարանի խնամակալութեան հրաւէրին համաձայն, Գեր. Մատթէոս եպիսկոպոս իմմիրլեան սկսած է այժմ դասախօսել նոյն վարժարանի մէջ։

— Մի խումբ ազգայիններ իրենց մէջ հանգանակութեամբ ոսկիէ քրօնօմէթր մի ժամացոյց նուիրեր են Ազգ. Ս. Փրկչեան Հիւանդանոցի բժիշկներէն Տօքթ. Գաբրիէլ Նահապետեանին, քօլէրայի ժամանակ Հիւանդանոց տարուած վարակեալներուն իր մատուցած անձնուէր ծառայութիւններուն փոխարէն իբրեւ մի երախտագիտական յիշատակ։

— Ողբացեալ Տիար Յովհաննէս Կիւլպէնկեանի մահէն ճիշդ մի ամիս յետոյ, փետր. 5/17ին, իր այրի Տիկնոջ Աբաքի Կիւլպէնկեանի մեռած լինելուն գոյժը կը հասնի Կ.պոլսէն։ Տիկին Աբաքի Կիւլպէնկեան, դատարանական և կրօնական նախարարութեան խորհրդական Հանգուցեալ վաճան էֆէնտիի, իր ատացած խնամեալ կրթութեամբը Կ.պոլսի հայ իգական սեռի գոհարներէ մին էր եղած և արժանացած էր նաեւ երկրորդ թարգմանի պաշտօնն ունենալու Սուլթանի հարէմին մէջ ուր երբ Եւրոպայի վեհապետուհիներուկամ իշխանուհիներ այցելէին, ընդունելութեան համար իւր ներկայութիւնն հարկ կը լինէր։

Տիկին Կիւլպէնկեան հիւանդ էր արդէն երբ իւր ամուսնին վոհ գնաց ինֆլուէնցային և դուէչ նորա ժամն էր որ պինք ալ վրայացուց հետեւիլ իր ամուսնին յաւիտենականութեան մէջ։

Յուղարկաւորութեան կրօնական արարողութիւնը Գատըղիւղի եկեղեցւոյն մէջ կատարուելով Ս. Պատրիարքի նախագահութեամբը, մարմինը փոխադրուած է Եէսիլդիւղէի Ազգ. Հիւանդանոցը ուր կիւլպէնկեանց յատուկ դամբարանին մէջ ամփոփուած է։

Սուլթանի պալատէն մի լիակատար պահ գնացած է կիւլպէնկեանց տունը ցաւակցութիւն յայտնելու, կայսերական հարէմի լարգմանի մահուանը համար։

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՆԻԱՅԷՆ

Տօպրուճա, յիւլ. 27/8 փետրվար 1894

Արմէնիոյ 28երորդ թուով հրատարակուած էր Բէսարաբիոյ հայ վարժարանի ուսուցչի մասին։

Այս անգամ եւս ամսոյս 15ի շաբաթ օրը, Յովհաննու Կարապետի տօնախմբութեան առթիւ, տեղւոյն քահանային հետ այցելութեան կը պարտէին, մինչդեռ դռմիսար և սերճէնթները Պր. Բրօքուրօրի հրամանաւ աճապարանօք վարժարան կերթային կուգային Պ. Թէրզեանը հրաւիրելու. բայց երբ վարժարանը գոց գտան, սիպտուեցան սերճէնթի մի սպասեցնել տալ անդ. մի քանի սերճէնթներ ալ փողոցէ փողոց, տունէ տուն չրջագայելով, իրենց կորուստը կը փնտռէին։ Վերջապէս կէս օրէն վերջ ժամ 2½ին երբ քահանան և Թէրզեանը տունէ մը դուրս կելնէին, յանկարծ բռնցայն դէմերնին ելնելով, «Պարո՛ն, մենք քեզ կը փնտռենք առաւօտէն ի վեր, ո՞ւր եա» կըսէ։— Անատոլիկ Ձեր ներկայութեանն եմ։ —«Պր. Բրօքուրօրը քեզ կուզէ, հիմա պէտք է երթաս, սակայն է» ըսելով կոկսի տալել. մէկէն կը հասնին սերճէնթները որոնցմէ միոյն կը յանձնուի ուսուցիչ Պր. Թէրզեանը որ տանի ուղղակի բարքէթի (դատարան)։ Ա՛ս ալ կերեւի մէ բռնցայնի աչքբացութիւնն է որ ուզեր է անպատճառ սերճէնթով զբօսկել։ Վերջապէս 2 ժամէն աւելի բաւական երկարօրէն հարցաքննութիւնները յետոյ, կ՛արձակեն առաջուան նման։

Այժմ մեր վաստկի մասին չուշադրութիւնը սկսած է ուռեցնել, պարծենալով թէ «Տեսա՞ք, ես ո՞վ եմ, ի՞նչ բաներ կուգայ ձեռքէս. ահա այսպէս մարդը գատարանները կը պարցընեմ և ելէկ ոչ այլ ինչ, գնեմ ժամավաճառ ընել կուտամ»։ Բայց մեզ այդ չնչին ուրախութեամբ չատանայ, միայով ամօթապարտ, ալ ինչպէս առաջուց ալ ըսուած էր, «և ոչ մի ճշտասիրը թուղթ գտնուած է իր մտանութիւններուն համապատասխանող». որովհետեւ բրօքուրօրը փոխուած է, այս պատճառաւ է որ երկրորդ անգամ հարցաքննութեան կանչուած է. թող չարախնդաց մտանչին ուրախութիւնը փորը ճեայ։

Գ.

ՆԱՄԱԿ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷՆ

Սոֆիէն, 2/14 փետրվար 1894

Գրեթէ մի քանի շաբաթներ յառաջ, քանի մը ուսումնասէր և գործունեայ անձանց նախաձեռնութեամբ քաղաքիս հայ երիտասարդութիւնն «Երիտասարդաց ընթերցասիրաց ընկերութիւն» մը կազմեց, նպատակ ունենալով՝ մայրենի լեզուն ծաւալել իւր մէջ և ազգային ղեկավարութեան ոգին արթընցնել տեղւոյս փոքրիկ գաղթականութեան մէջ։ Այս նպատակաւ տեղական կառավարութեան հետ հարկ անհրաժեշտ եղած օրինական գործառնութիւնքը կատարելէ ղկնի, բացաւ մի ընթերցարան, ուր կը յաճախեն այժմ ամէն ազգութեանցեր յընթերցութիւն հայ և օտար լրագրաց և յունկնդրութիւն տեսնախօսութեանց։

Ընկերութիւնն, որ 28–30 անդամներէ կը բաղկանայ, իւր անդամոց չաբաթական 20 սմոմթինք բաժնեգիններով ու նուէրներովը քիչ առեն մէջ կարողացաւ իւր նորակազմ ու աղքատիկ ընթերցարանը զարդարել Հայրենիք, Ձերխէյի Շարգիյէ (Հայաստան լրագիրներէն), Արմենիա, Բազմավէպ (ամսաթերթ), Սիօպօտա (Ս. գատուածին), Պալքանեան զօրա (Պալքանեան արշաւոյս), Տրակար (ընկերը), Սլիվէն (քաղաքիս մէջ հրատարակուղշաբաթաթերթ մը), L'Arménie և Les Annales լրագիրներով ու պարբերական հանդիսներով։

Վերոյիշեալ լրագիրներէն Արմենիա և L'Arménie-Armenia ընկերութեանս նուիրած է Մեծ. Տ. Խաչիկ Թօհաֆճեան հայրենասէր անձն, որ ինչպէս ամէն աղգօգուտ ձեռնարկներու մէջ, նոյնպէս սոյն բարենպատակ հաստատութեան իւր նիւթական ու բարոյական աջակցութիւն չզլանալէ զատ, վերոգրեալ երկու լրագիրները բարեհաճած է նուիրել ընթերցատան Ընկերութեան Ատենապետին եւս Տ. Սուքիաս Սուքիասեան նուիրած է «Les Annales». քաղաքիս հեռագրատան եւս իւր առ «Հայ Երիտասարդաց Ընթերցասիրաց ընկերութիւն» ատած սիրոյն ու համակրանաց իբր առհատատչեայ՝ ընթերցատան նուիրած է Le Petit Journal ֆրանսերէն թերթը(պատկերազարդ)։

Ուրախալի է մեզ տեսնել թէ քաղաքիս երիտասարդութեան մէջ ուսման և յառաջդիմութեան սէրն սկ ատ է զարգանալ և արդէն ընթերցատան հաստատութիւնը մեզ հատատալ կուտայ թէ ժամանակի պահանջներուն համեմատ գործող Իսլիմեայի հայ երիտասարդութիւնն աւելի պիտի յառաջդիմէ եթէ անոյթատ չարունակէ իր գործ, իր սկզբան ու նպատակին համաձայն։

ՇԱՄԻՐԱՄ

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ Ի ՌՈՒՄՃՈՒԽ

Յունուար ամսոյ 30ին (11 փետր.), կիւրակէ օր, հանդիսաւոր պատարագ և պաշտօն մատուցանցաւ տեղւոյս Հայոց Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ, վասն արիւշատութեան Պուլկարիոյ նորածին Գահաժառանգ Պօռիս Իշխանին, որ կը կրէ «Դուքս Սաքսոնիոյ և Իշխան Թրնովոյի» տիտղոսները։ Ներկայ էր նմանը չը տեսնուած բազմութիւն մը. պաշտօնապէս հրաւիրեալներէն կը նշմարուէին կառավարչական և Մեարապետական (Առաջնորդական) փոխանորդները, զինուորական ընդհ. հրամանատարն ու փ խանորդը, քաղաքապետն, ոստիկանապետն և այլ քաղաքային և զինուորական ատիճանաւորներ։ Պատարագի աւարտումէն վերջ, ընդունելութիւն եղաւ Թագ. խորհրդարանին մէջ, ուր բարեմաղթութիւնք եղան և բաժակներ պարպուեցան. հեռագրական պաշտօնեայ Տիար Մ. Տէրտէրեան պուլկարերէն լեզուաւ ուղերձ մը կարդաց, որուն համառօտութիւնը նոյն պահուն հեռագրուեցաւ Նոյին Բարձրութեանց Իշխանին և Իշխանուհւոյն Պուլկարիոյ. Տիար Օվաճըքեան եւս կարդաց ուղերձ մը հայերէն լեզուաւ. նաեւ բնտիր երգեր երգուեցան Ազգային երկսեռ վարժարանաց սանուց կողմանէ։ Ներկայք երկու ժամու չափ զուարթանալէ վերջ մեկնեցան խիստ գոհ և ուրախ։

ԹՂԹԱԿԻՑ

Կ.ՊՕԼՍԻ ՊՈՒԼԿԱՐ ԷԿԶԱՐՔԱՐՍԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Պուլկարներուն էքզարքը որ Կ.պոլիս կը նստի, մինչեւ այժմ կը բնակէր Օրթագիւղ մի տան մէջ որ պուլկար կառավարութիւնն այժմ բաւական չքեղ և յարմար չգտաներ էքզարքարանի համար։

Կ.պօլսի իտալական նախկին դեսպան Պարոն Պլան իր պաշտօնավարութեան միջոցին Բէյօղլի մէջ իր բնակութեան համար մի չքեղ չինք չինել տուած էր Ալմանական գեղապատման մօտ և երբ արտաքին գործերի նախարար ընտրուելով Հռոմ գնաց, ուզեց եր այդ չինքն ծախել, բայց թանկութեանը պատճառով այն միջոցին գնող չէր գտնուած։ Այժմ պուլկար կառավարութիւնն ուզած էր 17,000 օսմ. ոսկւով (391,000 ֆրանգ) գնել զայն և յանձնել Գեր. Էկզարքին բնակութեան համար։ Պր. Պլանի ներկայացուցչին հետ համաձայնուած էին և պուլկար կառավարութեան Կ.պոլսի գործակատար Պր. Տիմիթրօֆին 1500 օսմ. ոսկի (34.500 ֆր.) առհատատչեայ (փէշ) տուած էր արդէն և երբ կալուածապիրը տեղական կառավարութեան միջոցով պէտք է փոխանցուեր Պուլկարների էքզարքին վրայ, Նորին Գերապատուութիւնը հրաւիրուեցաւ Մեծ Եպարքոսին հետ տեսակցութեան։ Եպարքոսը յայտնեց իրեն թէ բարձրագոյն իրաւէով բացարձակապէս արգիլուած է իրեն այդ չինքը գնել և էքզարքարան դարձնել։ Պատճառը չհաղորդեց, ըսելով թէ Սուլթանի հրամանն է այդ և խոստացաւ ամբողջովին վճարել իրեն առհատատչեայ տուած 1500 օսմ. ոսկին։

Գեր. Էկզարքը գնաց հղելութիւնը պատմեց Պր. Տիմիթրօֆին որին Բ. Դրան արած դիմումներն ալ ապարդիւն մնացին։ Եւրոպական լրագիրներէն ոմանք կը գրեն թէ այդ տեղ առաջ մահմետականներու գերեզմանատուն է եղեր և Սուլթանը չհամիր որ այժմ Պուլկարի էքզարքարան գառնայ և թէ Սուլթանն ինք պիտի գնէ այդ չինքը Պարոն Պլանէն։ Ոմանք ալ Յոյներու նախանձաւոր գործակատարները կը նշմարեն այս խաղի մէջ որովհետեւ մինչդեռ Յոյներու տիեզերական պատրիարքարանը Կ.պօլսի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ հետ վարվում ոստիկանությունը, երբ ձեզ ձերբակալում է։

Ս. Վարդանյանը պատասխանում է, որ ոստիկանությունը ինքն իրեն ներկայացնում է որպես «Ազգային պաշտպանության կոմիտե», ինչպես նաև որ ոստիկանության պետ Ալեքսանդրովը ինքն է ղեկավարում ձերբակալությունները։

Ս. Վարդանյանը ձերբակալվել է 1921 թ. հունվարի 16-ին։

La Bulgarie հրատ. 16-ի համարում կարդում ենք հետևյալ նյութը։

Ս. Վարդանյանի գործով հրկիզման մասին հայտնի է դարձել, որ ձերբակալվածները ենթարկվել են ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներից մեկը՝ Ս. Վարդանյանը, ոստիկանության պետ Ալեքսանդրովի հրամանով ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ենթարկել է ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

Ս. Վարդանյանը (12 ձերբակալված) ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներին ենթարկել են ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

Ս. Վարդանյանը (12 ձերբակալված) ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներին ենթարկել են ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

Ս. Վարդանյանը (12 ձերբակալված) ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներին ենթարկել են ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

Ս. Վարդանյանը (12 ձերբակալված) ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներին ենթարկել են ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ հետ վարվում ոստիկանությունը, երբ ձեզ ձերբակալում է։

Ս. Վարդանյանը պատասխանում է, որ ոստիկանությունը ինքն իրեն ներկայացնում է որպես «Ազգային պաշտպանության կոմիտե», ինչպես նաև որ ոստիկանության պետ Ալեքսանդրովը ինքն է ղեկավարում ձերբակալությունները։

Ս. Վարդանյանը ձերբակալվել է 1921 թ. հունվարի 16-ին։

La Bulgarie հրատ. 16-ի համարում կարդում ենք հետևյալ նյութը։

Ս. Վարդանյանի գործով հրկիզման մասին հայտնի է դարձել, որ ձերբակալվածները ենթարկվել են ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներից մեկը՝ Ս. Վարդանյանը, ոստիկանության պետ Ալեքսանդրովի հրամանով ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ենթարկել է ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ հետ վարվում ոստիկանությունը, երբ ձեզ ձերբակալում է։

Ս. Վարդանյանը պատասխանում է, որ ոստիկանությունը ինքն իրեն ներկայացնում է որպես «Ազգային պաշտպանության կոմիտե», ինչպես նաև որ ոստիկանության պետ Ալեքսանդրովը ինքն է ղեկավարում ձերբակալությունները։

Ս. Վարդանյանը ձերբակալվել է 1921 թ. հունվարի 16-ին։

La Bulgarie հրատ. 16-ի համարում կարդում ենք հետևյալ նյութը։

Ս. Վարդանյանի գործով հրկիզման մասին հայտնի է դարձել, որ ձերբակալվածները ենթարկվել են ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներից մեկը՝ Ս. Վարդանյանը, ոստիկանության պետ Ալեքսանդրովի հրամանով ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ենթարկել է ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ հետ վարվում ոստիկանությունը, երբ ձեզ ձերբակալում է։

Ս. Վարդանյանը պատասխանում է, որ ոստիկանությունը ինքն իրեն ներկայացնում է որպես «Ազգային պաշտպանության կոմիտե», ինչպես նաև որ ոստիկանության պետ Ալեքսանդրովը ինքն է ղեկավարում ձերբակալությունները։

Ս. Վարդանյանը ձերբակալվել է 1921 թ. հունվարի 16-ին։

La Bulgarie հրատ. 16-ի համարում կարդում ենք հետևյալ նյութը։

Ս. Վարդանյանի գործով հրկիզման մասին հայտնի է դարձել, որ ձերբակալվածները ենթարկվել են ծանր խոշտանգումների։ Ձերբակալվածներից մեկը՝ Ս. Վարդանյանը, ոստիկանության պետ Ալեքսանդրովի հրամանով ենթարկվել է ծանր խոշտանգումների։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ենթարկել է ծանր խոշտանգումների, որպեսզի նրանք ցուցմունք տան, որ հրկիզումը կատարել են հայ դաշնակցականները։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։ Ալեքսանդրովը ձերբակալվածներին ասել է, որ եթե նրանք չխոստովանեն, ապա ինքը կձերբակալի նրանց հարազատներին։

չէր թողուցած իշխանին որ զինք ճանըչայ դնելու գայ։ Բայց ո՛րչափ մեծ եղաւ կայսրին զարմանքը երբ կայսրանին մէջ գտաւ Պիզմարք իշխանն որ իրեն ըսաւ. «Տէր արքայ, այնու ամենայնիւ չեմ կարող յարգաւիր կերպով ճանապարհ չդնել իմ վեհապետս։»

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Ջաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հեռացէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւնները կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականների գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով։

Հեղինակը չատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Ջարմանք պիտի պատճառէ լինի նաեւ ընթերցողների հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի դիւզացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը վճարի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիոյ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրք ղրկուիր։

Հ. Բարսեղ Սարգիսեան, Ուսումնասիրութիւն Մանիքէա Պաւղիկեան Թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը (կրօնական նորելուկ գաղափարների տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդինմէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումների մի առանձին ուսումնասիրութիւնն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ)։

2 ֆր. 20 սնթմ.։

Գիւտ Քահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց ազգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացնէ, մանաւորապէս Էջմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերաթուղթերով։ Սկիզբը գրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը։ Այս աշխատութիւն արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակին)։ 7 ֆր.

Կոստանդին Սպրիւեան, Հայրենիքէն դուրս։ Վէպիկ. Հրատարակութիւն Մ. Թարվերդեանի (Մեծագոյն բաղդի յոյսերով հայրենիքէն դուրս ելած մի հարուստ գիւղացու պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հաղիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է գտնել իր հանգստութիւն)։ 50 սնթմ.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ը. Վ. Իսաւէրտենց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ)։ Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգների անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին՝ 5 ֆր.։ (1 ոսկի ամերիկեան)։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲՐԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐը

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբրազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀԱՑՈՑ ՀԱՅԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ
Ա ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովնիս։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՄԲԱՑՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելուն (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի Թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութածալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի ջոջերի դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւնները ներքին մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի մի ջոջերի դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15 սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՕՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակի՛ւ ներքեւէն գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չ'լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ախալ և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

Աստղմէ զատ, Արմենիոյ խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գարեգին Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Մեծենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և այլն. և այլն.։

Գրավաճառանոցի մանրամասն ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապես։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱԶԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.